ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՋՐՎԵԺԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինտերակտիվ մեթոդների կիրառումը օտար լեզուների դասավանդման ընթացքում

ՈՒսուցիչ՝ Ջրվեժի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ
Սարգսյան Սուսաննա Ֆեդիկի

Խումբ՝ Առաջին

Վերապատրաստող՝ Անի Ներսեսյան

ԵՐԵՎԱՆ - 2023

Բովանդակություն

Ներածություն 3

§ 1. Ինտերակտիվ ուսուցման մեթոդի էությունն ու հիմնական սկզբունքները 5

§ 2.Ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման արդյունավետությունը օտար լեզվի դասավանդման ընթացքում 10

Եզրակացություն 16

Օգտագործված գրականության ցանկ 18

Ներածություն

XXI-րդ դարում կրթության նկատմամբ մոտեցումներն ու պահանջները ենթարկվում են փոփոխությունների, որոնք պայմանավորված են ժամանակակից տեխնոլոգիաների ներմուծմամբ, շուկայական տնտեսության զարգացմամբ և հասարակության բազմակողմանի ինֆորմատիզացիայի մակարդակի բարձրացմամբ: Այդ պատճառով կրթության նպատակն է պատրաստել պահանջված մրցակցության ընդունակ հասարակության անդամներ: Կրթության ոլորտում նորարարությունների ներմուծումը միշտ պայմանավորված է գործնական պահանջներով: Այսօր կյանքի արագ ընթացքին զուգահեռ, ամեն տարի, ամեն օր ուսուցման բնագավառում հայտնվում են նորարարություններ, որոնց ներմուծումը կրթական ոլորտ նպատակ է հետապնդում հեշտացնելու և ավելի արդյունավետ դարձնելու դասաժամը, մատչելի դրաձնելու ուսուցանվող նյութը: Քանզի ապրում ենք տեխնիկապես հագեցած ժամանակաշրջանում, հասկանալի է, որ կրթական ասպարեզում անհրաժեշտություն կա ինտերակտիվ ուսուցման կիրառման, ինչը ուսուցման պրոցեսը կդարձնի առավել արդյունավետ և հետաքրքիր: Նման դասընթացը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն: Բավարար չէ միայն բովանդակության մատչելի հասանելի ներկայացումը: Անհրաժեշտ ինտերակտիվ մեթոդների կիրառում, որոնց շնորհիվ աշակերտը կամա թե ակամա դառնում է դասապրոցեսի մասնակից:

Հետազոտությունները ցույց են տվել, որ

Երբ դուք ինչ-որ բան կարդում եք՝ հիշում եք 10%

Երբ դուք ինչ-որ բան լսում եք՝ հիշում եք 20%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում եք՝ հիշում եք 30%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում և լսում եք հիշում եք 50%

Երբ դուք ինչ-որ բան ինքնուրույն եք անում՝ հիշում եք 90%-ը:

Նոր կրթական ռազմավարությունը բերել է նոր մեթոդների, մոտեցումների իրագործմանը՝ ակտիվ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը: Այս աշխատության մեջ կներկայացնեմ ինտերակտիվ ուսուցման մեթոդների էությունը և դրանց կիրառման կարևորությունը օտար լեզուների դասավանդման ընթացքում:

§ 1. Ինտերակտիվ ուսուցման մեթոդի էությունն ու հիմնական սկզբունքները

Ուսուցման պրոցեսում տարբերում են դասավանդման երեք հիմնական մեթոդներ.

1. պասիվ (passive)

2. ակտիվ (active)

3. ինտերակտիվ մեթոդներ (interactive)

Պասիվ մեթոդը (սխեմա 1) սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև է, որտեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասիվ լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի հրահանգներին: Սովորողի և դասավանդողի կապը պասսիվ ուսուցման տարբերակում պահպանվում է հարցումների, ստուգողական աշխատանքների, թեստերի միջոցով: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների և սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման տեսանկյունից՝ ուսուցման պասսիվ մեթոդը համարվում է ամենից անարդյունավետը, սակայն, չնայած դրան, այն ունի մի շարք առավելություններ: Այն ուսուցչից պահանջում է թեթև նախապատրաստական աշխատանք դասին և տալիս է համեմատաբար մեծ ծավալով ուսումնական նյութի մատուցման հնարավորություն դասի սահմանափակ ժամանակահատվածում: Հաշվի առնելով այս առավելությունները՝ շատ դասավանդողներ պասսիվ մեթոդը նախընտրում են այլ մեթոդներից: Հարկ է նշել, որ որոշ դեպքերում այս մոտեցումը իրեն արդարացնում է փորձառու մասնագետի պարագայում, հատկապես, երբ սովորողներն ունենում են հստակ նպատակ՝ ուղղորդված առարկայի մանրակրկիտ ուսումնասիրմանը: Դասախոսությունը պասսիվ ուսուցման ամենից տարածված ձևն է: Այս մեթոդը լայն տարածում ունի բուհերում, որտեղ սովորում են չափահաս, լիարժեք ձևավորված անհատներ, որոնք տվյալ առարկան խորությամբ ուսումնասիրելու հստակ նպատակ ունեն:

Սխեմա 1, Պասսիվ մեթոդ

Ակտիվ մեթոդը (սխեմա 2) սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասսիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ ուսուցման դեպքում գլխավոր դերակատարը և հիմնական հրահանգավորողը դասավանդողն է, ապա այստեղ սովորողն ու դասավանդողը հավասար իրավունքների դաշտում են: Եթե պասսիվ ուսուցմանը բնորոշ է ավտորիտար ոճը, ապա ակտիվ մեթոդների դեպքում նախապատվությունը տրվում է դեմոկրատական (ժողովրդավարական) ոճին: Շատերը հավասարության նշան են դնում ակտիվ և ինտերակտիվ մեթոդների միջև, սակայն, չնայած իրենց ընդհանրությանը, այս մեթոդներն ունեն նաև տարբերություններ: Աշակերտը գիտելիք է ստանում ոչ միայն լսելով ուսուցչին, այլ նաև ուսուցչին տրվող հարցերի միջոցով կարող է պարզել իր համար անհասկանալի նյութը կամ տարբեր աղբյուրներից ինֆորմացիայի վերլուծման արդյունքում կարող է բացահայտել նոր գաղափարներ: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորելու, ճանաչողական 3 գործունեություն ծավալելու ուղիներն են, ինչի համար պետք է մտածեն, ստեղծագործեն:



Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «inter - փոխադարձ», «act-գործել» բառերից: Այլ կերպ ասած՝ եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է: Դասավանդողը մշակում է նաև դասի պլանը (սովորաբար այն կազմվում է ինտերակտիվ վարժություններից և առաջադրանքներից, որոնց կատարման ընթացքում ուսանողը սովորում է նյութը):

Ուսուցչի ֆունկցիաներն են՝

- Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:
- Բաժանել խմբերի և տալ հանձնարարություններ:

- Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:
- Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող սովորողը:
- Օգնել սովորողին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն պրակտիկ և ընդհանուր նշանակություն:

Ինտերակտիվ դասերի հիմնական բաղադրիչներն են ինտերակտիվ վարժությունները և առաջադրանքները, որոնք կատարվում են սովորողների կողմից: Ինտերակտիվ վարժությունների և սովորական հանձնարարությունների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը ոչ միայն և ոչ այնքան ամրապնդում է արդեն յուրացված նյութը, որքան ուսումնասիրում, յուրացնում է նոր նյութը:

Ուսուցչի ֆունկցիան աշակերտի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է: Հայտնի է, որ նոր բան սովորելիս մարդը թույլ է տալիս սխալներ: Ուսուցչի խնդիրը կայանում է նրանում, որ աշակերտի ուսումնական պրոցեսում կատարված սխալները ուսումնասիրի և վերլուծի:

Ինտերակտիվ ուսուցումն ունի իր սկզբունքները: Դրանք են՝

- փոխազդեցությունը,
- փոխուսուցումը,

- ակտիվությունը,
- համագործակցությունը,
- ինքնարտահայտման խրախուսումը,
- հետադարձ կապը։

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքից բացի, կան նաև ինտերակտիվ դասի սկզբունքներ։ Դրանք են՝

- Դասընթացի բոլոր մասնակիցները հավասար են։
- Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իր կարծիքը ներկայացնել ցանկացած հարցի վերաբերյալ։
- Աշխատանքի մեջ պետք է ներգրավված լինի։
- Ոչ մի սովորող չի քննադատվում։
- Պետք է հոգալ մասնակիցների հոգեբանական պատրաստվածության մասին. խոսքը գնում է նրա մասին, որ ոչ բոլոր մասնակիցներն են հոգեպես պատրաստ ներգրավվելու այս կամ այն աշխատանքի մեջ։ Այս առումով օգտակար է գովքը՝ ակտիվ մասնակցության ինքնադրսևորման համար։ Շատ կարևոր է նաև հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները։
- Քննարկման ընթացքում անկանխատեսելի դժվարությունների դեպքում ուսուցիչը միջամտում է։
- Ակտիվ օգտագործվում է տեխնիկական ուսուցման միջոցներ՝ սլայդներ, ֆիլմեր, մուլտֆիլմեր, տեսահոլովակներ։
- Ինտերկտիվ ուսուցման մեթոդները թույլ են տալիս ակտիվացնել գիտելիքների յուրացման գործընթացը և դրանց ստեղծագործական կիրառումը գործնական խնդիրների լուծման համար։
- Ձևավորում է ինքնուրույն տեղեկատվություն գտնելու, վերլուծելու կարողությունը։
- Զարգացնում է այլոց տեսակետը լսելու, համագործակցելու կարողությունը։[12]

---

[1] https://hy.wikipedia.org/wiki/

[2] <<ՈՒսուցման արդյունավետ հնարներ>> - Սերոբ Խաչատրյան, 2020թ.

§ 2. Ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման արդյունավետությունը օտար լեզվի դասավանդման ընթացքում

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես **դեղատոմս:** Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: Դասի երեք փուլերի համար կարող ենք օգտագործել տարբեր մեթոդներ, որոնք համապատասխանում են տվյալ դասի նպատակին և վերջնարդյունքներին: Դրանք են՝

1. դասի սկիզբ – **Մտագրոհ, Քլասթեր, Պրիզմա, Մեջբերումներ**

2. նոր նյութի բացատրություն – **Քարտեզագրում, T, M - աձև մեթոդներ, Քառաբաժան, Մտածիր - զույգ կազմիր - կիրառիր, Ծառ գծապատկեր, Վենի դիագրամ, Հոսող գծապատկեր, Հասկացությունների քարտեզ, Կենտրոններով աշխատանք**

3. սովորածը պարզելու հնարներ – **Ելքի քարտեր, Մտքի շարադրանք, 3-2-1, ԳՈՒՍ, Տասը տարի անց, Կիսատ նախադասություն, Դասի զեկուցող**

Դասի սկիզբ: Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին:

Ներկայացնենք դասը սկսելու մի քանի մեթոդներ:

1. Մտագրոհ /Brainstorm/



Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը:

2. Քլասթեր /Cluster/



Օրինակ՝ by car, by bus, go to the country, go to the city

3. Պրիզմա



Օրինակ՝ Games, football, tennis, reading are hobbies.

Դասի հիմնական մաս: Նոր նյութի բացատրություն: Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել: Ըստ գիտական հետազոտությունների՝ երեխան մեկ դասի ընթացքում կարող է միջինում սովորել 4-7 բան: Հետևաբար՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարևոր է այն փոքր կտորներով բացատրելը: 5-7 րոպե նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը: Ապա ևս 5-7 րոպե ծախսել նոր նյութի մատուցման վրա:

Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել գծապատկերներ: Ստորև նշենք մի քանի օրինակներ.



Նոր նյութի մատուցման փուլում շատ կարևոր է նաև արդեն իմացածի հետ կապակցումը: Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը կապակցել արդեն իմացածի հետ: Հետևաբար՝ նոր նյութը պետք է անընդհատ կապակցել նախկինում ուսումնասիրված նյութի հետ:

Կենտրոններով աշխատանք: Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին:

Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով:

Կենտրոններ. • հետազոտողների կենտրոն • ստեղծագործողների կենտրոն • գրավոր աշխատանքի կենտրոն • բացահայտողների կենտրոն

Բացահայտողների կենտրոն: Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը, կատարում նշումներ, վեր հանում վերջինիս հիմնական միտքը, ենթատեքստը և ներկայացնում ընկերներին:

Հետազոտողների կենտրոն: Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և օգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝ համացանց, գրականություն, փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթայթել տեքստի վերաբերյալ:

Ստեղծագործողների կենտրոն: Մասնակիցները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում, նկարազարդում, երգ, պար և այլն:

Գրավոր աշխատանքի կենտրոն։ Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և իրականացնում լեզվական կամ բառային աշխատանք՝ պահանջին համապատասխան։

Աշխատանքի ավարտին խմբերը միմյանց են ներկայացնում իրենց կատարած աշխատանքները։

Դասի ավարտին սովորածը պարզելու և կրկնելու համար կիրառվում են հետևյալ մեթոդները.

1. Տասը տարի անց - Նշե՛ք մեկ բան, որը կուզենայիք հիշել այս թեմայից տասը տարի անց։

2. Կիսատ նախադասություն

3. 3-2-1 – Նշե՛ք 3 նոր բառ, որ սովորեցիք, 2 բառ, որ կարևոր է և 1 բառ, որ կկիրառեք վաղը /Ելքի քարտեր/

4. Մտածիր-զույգ կազմիր-կիրառիր – Սկզբում սովորողները մտածում են առաջադրանքի շուրջ, քննարկում իրենց տեսակետերը, իսկ հետո զույգով ներկայացնում են ամբողջ դասարանին

5. Դասի զեկուցող - Այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում։ Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի զեկուցող։ Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի մասին էր դասը, ինչ արեցին, ինչ կարևոր բաներ սովորեցին։[3]

[3] <<ՈՒսուցման արդյունավետ հնարներ>> - Սերոբ Խաչատրյան, 2020թ.

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքս կարող եմ ասել, որ մեթոդների կամ հնարների կիրառումը չի կարող ինքնանպատակ լինել: Այսինքն՝ բուն նպատակը ոչ թե դասն աշխուժացնելն է, այլ մեթոդական ողջ զինանոցի կիրառմամբ հասնել ուսումնական նպատակների իրականացմանը: Եթե մեթոդների կիրառումը չի տանում դեպի այդ նպատակը, ուրեմն պետք է փոխել կամ կատարելագործել դրանք: Եթե մեթոդները արդյունավետ են, բայց առաջադրված նպատակը տարիքին համապատասխան չեն կամ ուսումնառության այլ պայմանների արդյունքում իրատեսական չէ, ուրեմն պետք է վերանայել նպատակը:

Ի վերջո, կարող են ծագել նաև չնախատեսված կամ անսպասելի հանգամանքներ, որոնք կթելադրեն ուսուցչին փոխել նախապես ընտրված մեթոդը՝ ստեղծված իրավիճակը շտկելու կամ հաղթահարելու համար: Բոլոր դեպքերում չկա դեպի նպատակը տանող մեկ ճանապարհ, ուսուցիչը ինքը կարող է հենց դասի ընթացքում փոխել մեթոդը կամ առանձին հնարները և հարմարեցնել դասին: Եթե դասի վարման մեթոդների շնորհիվ մենք ցանկանում ենք պատրաստել 21-րդ դարի համագործակցողներ, հետազոտողներ և նորարարներ, ուրեմն ուսուցիչը պետք է և՛ նախապես պլանավորի իր աշխատանքը, և՛ պատրաստ լինի դասապրոցեսի ընթացքում ցանկացած փոփոխությունների, որպեսզի կարողանա իր հնարամտությամբ հաղթահարել խնդիրները:

Ժամանակակից պայմաններում լայն տարածում են գտել ուսուցման ինտերակտիվ մեթոդները: Դրանք անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Ինտերակտիվ դասերի հիմնական բաղադրիչներն են ինտերակտիվ վարժությունները և առաջադրանքները, որոնք կատարվում են սովորողների կողմից: Ինտերակտիվ վարժությունների և սովորական հանձնարարությունների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը ոչ միայն և ոչ այնքան ամրապնդում է արդեն յուրացված նյութը, որքան ուսումնասիրում, յուրացնում է նոր նյութը:

Ավարտելով իմ աշխատանքը՝ ուզում եմ ասել, որ ուսուցիչը կարող է միայն ուղղորդել, ճանապարհ ցույց տալ նպատակին հասնելու համար, եթե միայն սովորողը ցանկանա։

<<Մարդ ձգտում է դեպի գիտելիքը, և հենց որ նրանում մարում է գիտելիքի ծարավը, նա դադարում է մարդ լինելուց>>։ Ֆ. Նանսեն

Օգտագործված գրականության ցանկ

<<ՈՒսուցման արդյունավետ հնարներ>> - Սերոբ Խաչատրյան, 2020թ.

https://hy.wikipedia.org/wiki/

https://www.slideshare.net/torosian/ss-9876301